

<ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ> ԲԲԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ Հ.2Խ-26

ք. Երևան, Արշակունյանց պողոտա 12

05.03.2026թ., ժամը 17:15

Նիստին ներկա էին՝ խորհրդի 9/իննը/ անդամներից 9 /իննը/:

Խորհրդի անդամներ՝ -

Հ. Ռ. Շիրինյան (նախագահ), Երոյան Տ.Ս., Գամբուրյան Ս.Կ., Գրիգորյան Ս.Է., Մաթևոսյան Է.Հ., Հակոբյան Ն.Խ., Եսայան Հ.Լ. Ղազարյան Գ.Գ. և Մինասյան Ս.Հ.:

Հրավիրված անձ՝ գլխավոր հաշվապահ – Մակարյան Ազատուի Սերյոժայի

Նիստի օրակարգը՝

- Ընկերության 2025թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության մրցույթի արդյունքների մասին (զեկուցող՝ խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն Տիգրան Սամվելի Երոյան):
- Ընկերությանը պատկանող Արշակունյաց պողոտայի 14 հասցեում գտնվող տարածքի վարձակալությանը տրամադրվող հարցը: (զեկուցող՝ խորհրդի նախագահ Հրանտ Ռուբենի Շիրինյան):
- Այլ հարցեր

Ժողովը բացեց խորհրդի անդամ Ներսես Խաչատուրի Հակոբյանը:

Նա խորհրդի անդամներին տեղեկացրեց նիստի օրակարգի վերաբերյալ: Առաջին հարցի վերաբերյալ ձայնը տրվեց խորհրդի անդամ, Ընկերության գլխավոր տնօրեն Տիգրան Սամվելի Երոյանին:

Նա ասաց, որ Ընկերությունը սույն թվականի հունվարի 30-ին, <Բաժնետիրական ընկերությունների մասին> օրենքի 96-րդ հոդվածի համաձայն ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով հրապարակել է հետևյալ հայտարարությունը՝

<<Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան> ԲԲԸ-ն հայտարարում է մրցույթ 2025թ. ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության ընտրության համար:

Հայտերն ընդունվում են մինչև ս/թ մարտի 2-ը ներառյալ:

Հայտերը ներկայացնել Ընկերության հասցեին՝ 0023, ք. Երևան, Արշակունյանց պողոտա 12, հեռախոս՝ 010-525321:>

Ստացվել է մեկ հայտ՝ Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ից:

Խորհրդի անդամ Հ. Եսայանը խորհրդի անդամների մոտ բացեց ծրարը:

Աուդիտորական ընկերությունները աուդիտի շրջանակում նախատեսում են իրականացնել 2025թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ՝ համաձայն Աուդիտի միջազգային ստանդարտների /ISA/ և ՀՀ գործող օրենսդրության ու աուդիտի արդյունքների հիման վրա տրամադրել անկախ աուդիտորական եզրակացություն:

Ընկերությունների ֆինանսական գնային առաջարկությունը՝ Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի – 2,800,000.00 դրամ,

Խոսքը տրվեց գլխավոր հաշվապահ Մակարյան Ա. Ս.:

Նա ասաց, որ մրցույթին մասնակցող ընկերությունը, ելնելով իր կատարողականից և առաջարկվող գնից, կարող են մասնագիտական օբյեկտիվ աուդիտ իրականացնել: <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ն տվյալ ոլորտում ունի 16 տարվա աշխատանքային փորձ: Գլխավոր հաշվապահ առաջարկեց խորհրդի անդամներին քվեարկել՝ ելնելով ոլորտում մասնագիտական փորձից, լավագույն և օպտիմալ ֆինանսական գնային առաջարկից:

Ելույթ ունեցան խորհրդի անդամներ Մաթևոսյան Է.Հ., Եսայան Հ.Լ. և Մինասյան Մ.Հ. նրանք իրենց ելույթներում համաձայնվեցին գլխավոր հաշվապահի փաստարկներին և առաջարկեցին կողմ քվեարկել <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի համար:

Բաց քվեարկությանը դրվեց <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի Ընկերության 2025 թվականի ֆինանսատնտեսական գործնության աուդիտ իրականացման հարցը՝

<Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի – 9/իննը/- կողմ, դեմ և ձեռնպահ չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. *Ընկերության 2025 թվականի ֆինանսատնտեսական գործնության աուդիտ իրականացնող անձ ընտրել <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ -ին:*
2. *Գլխավոր տնօրեն, խորհրդի անդամ Ս. Ս. Երոյանին կնքել պայմանագիր <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ -ի հետ, ընդհանուր գումարով 2,800,000.00 ՀՀ դրամ:*

Երկրորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց խորհրդի նախագահ Հրանտ Ռուբենի Շիրինյանին:

Նա ասաց, որ Ընկերությանը խնդրանքով դիմել է Ա/Չ Էդուարդ Տիգրանի Թովմասյանը, որը ցանկություն ունի վարձակալել Ընկերության մոտ 400 քմ ազատ տարածք: Շիրինյան Հ. Ռ. խորհրդի անդամներին առաջարկեց քննարկել և տալ առաջարկություններ Ընկերությանը սեփականության պատկանող Արշակունյանց 14 հասցեում գտնվող չօգտագործվող տարածքները:

Խորհրդի անդամ Ղազարյան Գ. Գ. առաջարկեց քննարկել Արշակունյանց 14 հասցեում գտնվող 3-րդ հարկի տարածքը, որը կազմում է 390 քմ:

Ելույթներ ունեցան խորհրդի անդամներ Մինասյան Մ.Հ. և Եսայան Հ. Լ., որոնք իրենց ելույթներում ընդգծեցին, որ վերը նշված տարածքները ներկայումս Ընկերության կողմից չեն օգտագործվելու, ու նպատակահարմար և արդյունավետ է այդ տարածքները տալ վարձակալությանը:

Ելույթ ունեցավ խորհրդի անդամ և գլխավոր տնօրեն Երոյան Ս. Ս., նա առաջարկեց վերը նշված տարածքները տալ վարձակալությանը 1 քմ 4800 ՀՀ դրամ այդ թվում ԱԱՀ:

Այլ առաջարկներ չեղան:

